

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿԸ՝ ԳԱՍԴԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆ

Posted on October 25, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Վկայութիւն Մեր Գասպար Տէրտէրեանի Մասին

Տոքթ. Տիգրան Ժ. Աբրահամեան, Օնթարիօ, Հոկտեմբեր 2021

Կը յիշեմ այսօրուան պէս: Հայկական ցեղասպանութեան յիսնամեակը (1965) նախորդող երկու տարիներու ընթացքին խլրտում մը կը ձեւաւորուէր լիբանանահայ ուսանողութեան եւ ընդհանրապէս երիտասարդ մտաւորականներու շարքերէն ներս: Առաջին կարգի վրայ էին ձախակողմեան-մարքսիստ պիտակաւորուածները, որոնք



«արժանացան» կարգ մը ներգաղութային քաղաքական հոսանքներու ղեկավարութեան անհեթեթ պարսաւանքներուն, ամբաստանութիւններուն, սպառնալիքներուն եւ ֆիզիքական բռնութեան:

Ինչ էր «մեղքը» այդ երիտասարդներուն: Անոնք, ի շարս այլ ներկուսակցական պահանջքներու, համարձակած էին բարձրախօսելու ցեղասպանութեան յիսնամեակը հաւաքաբար համագաղութային չափանիշով ոգեկոչելու գաղափարի մասին: Գասպար Տէրտէրեան իր ազդու ոճով, գիտելիքներու ճոխութեամբ, փաստերու թուարկումով, համամարդկային բարոյամշակութային արժէքներու խիստ գիտակցութեամբ, իրաւազրկուած ժողովուրդներու իրաւունքներու վերառումով եւ իրաւաբանական սկրատեան «տիպլէքիկ» ճկունութեամբ օժտուած՝ դարձաւ վերոյիշեալ ընդլայտակէտայ շարժումին գլխաւոր մղիչն ու բանբերը:

Շարք մը շաղակրատող (charlatan) եսակեդրոն անձեր, աթոռամոլ ու ազգային գաղափարական մրցակցութիւնը կորսնցնելու ախտէն վարակուած անհատներ ու շրջանակներ, որոնց նիւթաբարոյական աղբիւները կասկածի տակ էին, խժբժանքի ենթարկեցին Գասպար Տէրտէրեանը: Անոնք լախրշաբար համարձակեցան ամբաստանութիւններ «շռայլել» աստ ու անդ յանկերգելով, որ Գասպարը ապագային աղբիւրներու գործակալ մըն էր: Ի հեճուկս բոլոր սադրանքներու, Գասպար Տէրտէրեան ուսուցիչը, գաղափարական ընկերը, համագաղութային անսակարկ առաջնորդը, առանց զիջելու իր որդեգրած մարքսիստական վարդապետութիւնը, տարիներու ընթացքին իր մտաւոր հեղինակութիւնը ընկալելի դարձուց համակիր եւ այլ շրջանակներու, իր շուրջ համախմբելով մտաւորականներու փաղանգ մը ու ազգային մտահոգութեամբ տառապող ոչ-արհեստաւարժներու հոյլ մը:

Պատահական չէր Գասպարի տասնամեակներ առաջ «Տարագիր Արեւմտահայերու

Քոնկրետ»ի (ՏԱՀՔ) ստեղծման մարտակոչը, որուն յարեցան այլախոհ շարք մը մտաւորականներ: Ան անպայմանօրէն պարտադիր չէր նկատեր իր կողմէ սահմանուած տարազներու ընդունումը: Պատրաստ էր երկխօսութեան եւ նոր չափանիշերու որդեգրումին համաձայն միջազգային քաղաքականութեան ելեւէջներուն: Ան կը շեշտէր հողային պահանջներու հետապնդումը միջազգային իրաւարար ատեաններու միջոցով, պայմանաւ որ տարագիր արեւմտահայութեան հետնորդները ունենան իրենց միջազգայնօրէն ճանցուած կազմակերպութիւնը, հենած բազմահարիւր, բազմահազար, բազմամիլիոն պահանջատերերու զօրակցութեան վրայ: Երազ մըն էր գուցէ, որ ցարդ չէ իրականացած. սակայն ո՞վ կարող է գուշակել ապագայ միջ-պետական յարաբերութիւններուն եւ աշխարհաքաղաքական դարձուածքներուն բնոյթը, կամ բարենպաստ անկիւնադարձերը: Մինչ այդ անհրաժեշտ է, որ ՏԱՀՔ-ի ոգին առոյգ մնայ ի հեճուկս աշխարհակուլ այլասերման եւ ուժացումին: Բախտորոշ օրեր կ'ապրինք եւ այդ կոչին գործադրութեան նախանշանները կը նշմարենք «Արեւմտահայերու Ազգային Խորհուրդ»ի հիմնադրութեան սաղմնային նախնական աշխատանքներուն ու «Արեւմտահայերու Ազգային Քոնկրետի» տասնամեայ գործունեութեան մէջ:

Մեր Գասպար Տէրտէրեան մեկնեցաւ այս աշխարհէն, սակայն իր կոչը կը շարունակէ թեւաւորել արեւմտահայերու հոգիներուն մէջ: Յաւերժ յարգանք աննկուն մաքառողին՝ գաղափարական երեց ընկերոջս՝ Գասպարին:

ԳԱՍՊԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ԿԱՅՅԸ

Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, Հոկտեմբեր 2021

Երիտասարդ Էր: Աչուրներուն կայծը երկինքի աստղերէն Էր որ կը ծորէր, եւ հասակին ձեւերը մարմարներուն զօրութիւններէն Էր կերտուած... Մտածումը մարդկային արդարութեան էջերէն յստակօրէն ջահավառեալ... Ճակտին վրայ իրենց ցաւի եւ բարութեան ծաղկըներն ունէին: (Սիւսմանթօ)

Իմ մարդակերտում-հայակերտումիս մէջ կարելոր դեր կատարած են ընտանիքս, դպրոցներս, ուսուցիչներս, իսկ մարդասիրական եւ ընկերային արդարութեան համար պայքարողի դաստիարակութեան մէջ մեծագոյն դերը կը պատկանի յատկապէս «մարդկային արդարութեան էջերէն յստակօրէն ջահավառեալ» երկու մեծութիւններու՝ երկու եղբայրներ **Արմենակ եւ Գասպար Տէրտէրեաններուն**: Ատենին արտայայտուած եմ Արմենակին մասին իր վաղաժամ մահուան առթիւ, հիմա կարգը եկաւ Գասպարին, կամ հարիւրաւորներու համար՝ իսկական «Մերին»՝ Գասպար Տէրտէրեանին, «ընկեր Գասպարին» կամ առանց որեւէ մակդիրի՝ պարզապէս՝ «Գասպարին»: Գաղափարակից

ընկերային շրջանակները պարզապէս ըստինքս՝ Գասպարը ստեղծաբան էր որ...»: Վե՛րջ, բացատրութեան եւ աւելորդ մեկնաբանութեան կարիք չկար եւ ամէն ինչ հասկնալի էր եւ պետք էր լրջօրէն հաշուի առնուէր «Մեթրին» ըսածը:



Ո՞ր էր «գաղտնիքը»: Գաղտնիք չկար: Պատասխանը պետք էր փնտռել իր դաւանած անշեղ գաղափարախօսութեան (բայց ոչ տոկմայի) մէջ: Իր համար ճշմարտութիւնը մէկ էր, այսինքն՝ եթէ սա դիմացի սարը Մեծ Մասիսն է, ուրեմն Քիլիմանճարօսն չէ՛:

Նոր Լիբանան մը

Աշակերտներ էինք իր յաճախած վարժարանին մէջ իր աւարտելէն վեց տարի ետք: Մեր հայկական «փակ» թաղերէն ետք արագօրէն մեր աչքը կը սկսէր բացուիլ աշխարհին, այլեւս «Չարթօնք» եւ «Արարատ» օրաթերթերը միակ աղբիւրը չէին աշխարհաճանաչման, հիմա արդէն կար ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան վարժարանը իր ծանրախոհ տնօրէնով, Չարեհ Մելքոնեանով, Գերսամ Ահարոնեանով, Վահե-Վահեանով: Բայց բան մը պակաս էր, այդ ալ գաղափարի մը կամ իտեալի մը կերպարն էր:

Նոր էինք ելած 1958-ի Լիբանանի լլկիչ քաղաքացիական բախումներէն, իսկ հայերուս պարագային այսպէս կոչուած «հնչակ-դաշնակ» **եղբայրասպան** կռիւներէն (**եղբայրասպան** բառը կը գործածեմ ամենայն զգուշաւորութեամբ, որովհետեւ իրականութեան մէջ կար նախայարձակ կողմ...): Լիբանանեան հայրենիքը կ'աշխատէր բուժել վերքերը, չորցնել արցունքները եւ լծուիլ նոր Լիբանանի վերակառուցման: Յաջորդող տարիներուն երկիրը, ինչպէս կ'ըսեն, «դրամ հոսեցաւ», արեւմտեան Պէյրութը գլուխը առաւ գնաց, **«համբալիզմ»(*)** մը սկսաւ եւ երկիրը խորացաւ քաղքենիութեան եւ արեւմտեան բարքերու կոյր ու խելացնոր կապկումի մը յորձանուտին մէջ: Խորացան ընկերային անհաւասարութիւնն ու անկէ բխող հակասութիւնները: Եւ այս բոլորը «պաղ պատերազմի», «արեւելք-արեւմուտքի», դրամատիրութիւն-ընկերվարութիւն պայքարի խորքին վրայ: Խօսքի ազատութեան համեմատաբար ազատ պայմաններու տակ լիբանանեան եւ արաբական աշխարհի մէջ կը շօշափուէին ընկերվարութեան, ընկերվարական երկիրներու ձեռք ձգած «յաջողութիւններու» մասին նորութիւններ, եւ տեղի կ'ունենային քննարկումներ:

Հայ համայնքը նոյնպէս կը գտնուէր այս փնտռտուքին մէջ, մանաւանդ որ «երկաթ վարագոյրը» քիչ մը բացուած կը թուէր, հայրենի թերթեր, Երեւանի ծայնասփիւռը («Երեւանն է խօսում»), հայրենի արուեստագետներու, երաժիշտներու եւ գրողներու այցելութիւնները հայութեան սիրտերը կը լեցնէին հպարտութեամբ: Ահաւասիկ այս

մթնոլորտին մէջ էր որ մեր դպրոցին մէջ (ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան վարժարան) իր ներկայութիւնը կը զգացնէր իւրայատուկ շարժում մը, որուն անդամներուն ուշադրութեան կեդրոնին մէջ պիտի յայտնուէի ես՝ ուրիշ դասընկերներու կամ ակադեմիկներու հետ:

Մամուլի եւ հրապարակագրութեան բնագաւառին մէջ այլեւս իրենց ամուր դիրքը գրաւած էին «Նայիրի»-ն, «Սփիւռք»-ը, «Մեր Նշանաբանն Է Յառաջ» թերթերը: Նոր խօսքեր կը հնչէին, նոր վերլուծումներ եւ մեկնաբանութիւններ լոյս կը տեսնէին, իսկ համաշխարհային գետնի վրայ նոր մագլցում կ'արձանագրէին տարատնկեալ խորայն պետութիւնը ընդ Արաբական աշխարհի, ԱՄՆ լլկիչ պատերազմը Վիետնամի մէջ, հիփփիական շարժումներ, «Պիթըրզ» ներք կ'երգէին հասարակ աշխատաւորի սերն ու տուայտանքները ("It's Been a Hard Day's Night" եւայլն), միևս եւրոպան փնտռտուքներու մէջ էր տակաւին:

Վարժարանին մէջ այս շրջանին յանկարծ «խումբ մը տղաք» կը կազմակերպէին հայկական երկրորդական վարժարաններու մասնակցութեամբ [«Քիչ մը ամէն բան»](#) կոչուած հանդէս մը: Առաջին անգամ ըլլալով զանազան կուսակցութիւններու եւ յարանուանութիւններու «հովանաւորութիւնը» վայելող դպրոցները կը յայտնուէին մեր վարժարանի «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ: Նոր սկիզբ մը կամ մեկնարկ մըն էր սա, իսկ ինծի եւ կարգ մը ընկերներուս համար ինքնագիտակցութեան գալու առողջարար ցնցում մը:

«Ուսանողացը»

Տակաւին մեր վարժարանի հիմնադրութեան տարիներէն, «յառաջդիմական-ձախակողմեան» հակումներով բարձր կարգի աշակերտներ հիմնած էին կիսաընդհատակեայ «ուսանողաց միութիւն» մը: Յետագային պիտի իմանայինք թէ Գասպարն էր սիրտն ու հոգին: Ահաւասիկ այդ շարժումն էր որ մէկ-երկու սերունդ ետք կ'ընդգրկէր նաեւ զիս: Հոյակապ միջավայր մըն էր, ուր ուսանողներս եւ Դարուհի Յակոբեանի ուսանողուհիները բացի ընկերային հաճելի երկսեռ հանդիպումներէ՝ կը լսէինք կարճ գեկուցումներ, մեկնաբանութիւններ եւ վերլուծումներ աշխարհի մէջ տեղի ունեցող անցուդարձերու մասին՝ Ժան Փոլ Սարթր, Կարլ Մարքս, Էնգելս, Լենին, Ստեփան Շահումեան, Աղասի Խանճեան, սիոնիզմ, մասոնականութիւն, «պուրժուազիա»...բաներ, որոնց մասին պատմութեան դասերուն երբեք չէինք լսեր: Ես, ի շարս այլ ընկերներու, այս «խմբակին» մէջ գտանք մեր ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՅԸ, դպրոց մը, ուրուն սիրտն ու հոգին Գասպարն էր եւ այլ՝ Գասպարէն տարիքով փոքր տղաք ու աղջիկներ:

Շուտով մենք դարձանք «նոր դպրոցի» մը սաները եւ հոն թրծուեցանք ու դարձանք ինչ որ ենք այսօր որպէս հայրենասէր բժիշկներ, ճարտարագետներ, գործարարներ, քանի մը ուսուցիչ-դասախօսներ, կուսակցութիւններէ եւ միութիւններէ ներս գործօն անդամ-

անդամուհիներ, խմբագիրներ ու լրագրողներ:

«Ուսանողաց»ը ճիւղաւորուեցաւ նաեւ Հայաստանէն ներս բարձրագոյն ուսում ստացող սփիւռքահայ ուսանողներու շրջանակին մէջ: «Ուսանողացի» միջավայրէն դուրս եկան «Երիտասարդ Հայ.»ի խմբագիրներ, լրագրողներ, նոյն խմբակին արգանդէն ծնաւ Armenian International Magazine-ը եւ այլ ձեռնարկներ ու ծրագիրներ:

Ոգին Գասպարն էր, Արմենակ Տէրտէրեանը, Յակոբ Պօղոսեանը, Տիգրան Աբրահամեանը (keghart.org) եւ ուրիշներ: Այս խմբակն էր որ ոտքի պահեց Լիբանանի եւ Սուրիոյ հայրենասէր յառաջդիմականներու շարժումը, ուսանողաց կամ համալսարանականներու եւ համալսարանաւարտներու միութիւնները:

Մեր Գասպար Տէրտէրեանն էր կայծ տուողը. «ՄԵՐ ԳԱՍՊԱՐԸ»ը կ'ապրի՛:

() Արեւմտեան Պէյրութի Համրա փողոցը կը գտնուի Ամերիկեան համալսարանին շատ մօտ: Այստեղ արագօրէն բացուեցան շարժապատկերի սրահներ, սրճարաններ, գրասովայրեր, ուր կարելի էր կարծել թէ կը գտնուիս Փարիզի կամ Լոնտոնի ճեմափողոցներուն մէջ, ուր կարելի էր զոյգերով գրօսելի՛ առանց հանդիպելու խեթ հայեացքներու եւ «ազատ» զգալ: Քիչ մը Եւրոպա էր Համրան:*

ՓՈՒՍԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ*

Մեր Գասպար Տէրտէրեանի մահուան քառասունըփն առիթով

ՍԱՐԳԻՍ Յ. ՄԻՆԱՍԵԱՆ, Կիրակի, Հոկտեմբեր 3, 2021, Ս. Պետրոս եկեղեցւոյ լսարան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանի, 1952-53-ի անդրանիկ շրջանաւարտներու 9 հոգինոց խմբակէն, Մեր Գասպար Տէրտէրեանն ալ անդարձ շիջեցաւ:



Անցեալի կիսամութ ու փայլուն յիշատակներ կը խուժեն, վերականգնելով դասընկերոջս անմոռանալի կերպարը:

Ուսանողական այդ տարիներուն արդէն փիլիսոփայական վերլուծումներ կ'ըներ: Պէյրութի Ամերիկեան Համալսարանի առաջին տարիէն ետք անցաւ ֆրանսական

Université St. Joseph համալսարան, ուրկէ վկայուեցաւ իբրեւ իրաւաբան: Կը տիրապետէր
հայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներուն:

Իր մտածողութիւնը կլանուած էր Մարքս-Էնկելսի փիլոսոփայութեամբ: Հայկական, անգլիական, ֆրանսական եւ արաբական գրականութեանց գլուխ գործոց ստեղծագործութիւնները ծանօթ էին իրեն: Կը վերլուծէր այլազան երեւոյթներ, կը վիճաբանէր, ու ճարտասանօրէն կը մեկնաբանէր այլազան քաղաքականութիւններ:

1915 Ապրիլ 24-ի Հայոց Ցեղասպանութեան ու տարագրութեանց, Պէյրութի Պուրճի հրապարակի Մայիս 6-ի կախաղաններու, ինչպէս նաեւ Դամասկոսի Մերճէի, ու Պաղտատի հրապարակներուն վրայ կախաղաններու միջեւ, տեսած է *ճակատագրակցութիւն*, կոչ ուղղելով արաբական ժողովուրդին, հայութեան հետ միասնաբար պայքարելու փանթուրքիզմին դէմ:

Մերթ Գ. Տէրտէրեան հրապարակագրութեամբ, բազմաթիւ յօդուածներով, Գրական Շրջանակի օրացոյց-ուղեցոյցով, արծարծեց եւ հետապնդեց կազմակերպումը *տարագիր արեւմտահայութեան, ներկայացուցչական Կեդրոնական Մարմինի* մը, որ լիազօր միակ մարմինի մը հանգամանքով, պիտի հետապնդէր Տարագիր Արեւմտահայութեան միջազգային կարգավիճակը, տեր կանգնելով մեր հողային դատին, ընդդէմ գայն լուծարել փորձող թուրք թշնամի պետութեան:

Անկկա կոչ կ'ուղղէր անյապաղ ձեռնարկելու, վերակազմակերպումին վերածնունդի նուիրական գործին, ազատագրուելով սնամեջ ինքնասիրահարուածութենէն ու խստամտան կենսաձեւէն:

Արդարեւ, 20 Նոյեմբեր 2010-ին, Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ սփիւռքահայ կառոյցի մը նուիրուած գիտաժողով: Նման հանդիպում մըն ալ կայացաւ Փարիզի մէջ, 10 Դեկտեմբեր 2011-ին, կազմակերպութեամբ [Արեւմտահայերու Ազգային Համագումարին](#)

Շուրջ տարի մը առաջ, երկու նշանակելի յօդուածներով 2020 Նոյեմբերին ու Դեկտեմբերին, Գ. Տէրտէրեան անդրադարձաւ Արցախի եւ Հայաստանի ճակատագրին: Հարաւային Կովկասը ու Կեդրոնական Ասիան Ռուսական Դաշնութեան անվտանգութեան գօտին ըլլալով, Փութին միջամտեց իր երկրին խաղաղապահ զօրքերը Արցախ ուղարկելով ա՛յն ատեն միայն, երբ ազերի բանակը գրաւած էր 1988-1994-ին կորսնցուցած իր հողամասերը, Հայաստանի եւ Արցախի միացեալ բանակը ծանր կորուստներու ենթարկելով: Չուզահեռաբար, Մինսքի խմբակի մնացեալ երկու համանախագահներն ալ (Ս. Նահանգներու եւ Ֆրանսայի) զօրաշարժի ենթարկուեցան Փութինի կողմէ, որպէսզի Ռուսաստանի կողմէ պարտադրուած հրադադարը միջազգային պահանջք դառնայ: Մէկ խօսքով, Ռուսաստան ամէն գնով պիտի

պաշտպաներ Արցախը եւ Հայաստանը, որովհետեւ անոնք երաշխիք կը նկատուէին փանթուրքիզմի դէմ, գէթ որոշ ժամանակի մը համար:

Չուգահեռաբար, Գ. Տէրտէրեան կը մատնանշէր նաեւ, թէ միջազգային հանրային իրաւունքը կը պահանջէ, որ ժողովուրդին անկախութեան հռչակումը ճանչցուի ՄԱԿ-ի անդամ պետութիւններուն կողմէ: Միջազգային Արդարադատ Ատեանին իրաւախօհական դրական կարծիքն ալ մեծապէս պիտի նպաստէր Արցախի միջազգային ճանաչումի աշխատանքին:

Արցախի ինքնորոշման իրաւունքը անկապտելի, անառարկելի, անժամանցելի եւ անհրաժարելի էր: Անիկա կարելոր կը նկատէր ժողովրդահայրենասիրական համակարգի մը ստեղծումը:

Համակրելի էր Գասպարին ընկերութիւնը: Դժբախտաբար, Լիբանանի քաղաքացիական 15 տարիներու պատերազմը (1975-90) անկայուն գոյավիճակ ու ժխտական ազդեցութիւն եւ հետեւանք ունեցան իր վրայ:

Միայնակ, ամփոփուած իր աշխարհին մէջ, անցնող ժամանակին հետ հետզհետէ հիւժեցաւ, մարելով փափախումը իր սրտին, հայրենի ժողովուրդին եւ սփիւռքահայութեան ճակատագրին հետ տազնապող փիլիսոփայ-տեսաբան մեր հայուն:

** ՅԳ. Շրջանաւարտ դասարանի սաներն էին Այվազեան Վաչէ, Թորոսեան Լեւոն, Խապայեան Կարապետ, Կարապետեան Սենեքերիմ, Միլասեան Սարգիս, Սահակեան Յակոբ, Պահատրեան Միսաք, Տէրտէրեան Գասպար ու Տեմիրճեան Արսէն:*

Գրասէր յիշեալ տղոցմէ 4 հոգի, խորհրդական ունենալով Պրն. Օսնիկ Սարգիսեանը, խմորատիպ տպագրութեամբ, հրատարակեցին «Նուիրում» ամսաթերթ-պարբերականը:

Ծանօթութիւն Keghart.org-ի:-

1. Նկարը՝ ձախին Գասպարի գաղափարակից ընկերը Յակոբ Պօղոսեան, իսկ աջին՝ Մեթր Գասպար Տէրտէրեան.

2. Արեւմտահայերու Ազգային Համագումարը հիմնադրուեցաւ 10 Դեկտեմբեր 2011-ին Սեւրի մէջ: Այս տարուայ վերջին կազմակերպութիւնը պիտի նշէ իր գործունէթեան տասնամեակը: Սեղմէք [NCWA Activities & Opinions \(2009-2018\)](#) գաղափար մը կազմելու համար հաստատութեան մասին:

There are no comments yet.